

## Կ Ա Ր Ծ Ի Ք

**Աննա Հրանտի Ավետիսյանի «Բողոքի արտահայտման լեզվագործաբանական առանձնահատկությունները հայերեն և անգլերեն համացանցային խոսույթում»  
Ժ. 02.02 – «Ընդհանուր և համեմատական լեզվաբանություն»  
մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ**

Այսօր ասես ողջ աշխարհն ապրում է համացանցային տիրույթում, իսկ ֆեյսբուքյան էջերը դարձել են մարդկային հաղորդակցության այնպիսի գործիք, որի միջոցով իրականացվում է տեղեկատվության սրնըթաց տարածում. աշխարհը ճանաչում է մեզ, մենք շփվում ենք աշխարհի հետ: Այստեղ է, որ մենք ազատ արտահայտում ենք մեր մտքերը, մեկնաբանությունները, մտահոգությունն այս կամ այն իրողության վերաբերյալ, բողոքն ու քննադատությունը, դիրքորոշումն ու կարծիքը: Հրապարակային պաշտպանության ներկայացված Աննա Հրանտի Ավետիսյանի «Բողոքի արտահայտման լեզվագործաբանական առանձնահատկությունները հայերեն և անգլերեն համացանցային խոսույթում» թեմայով ատենախոսությունը գալիս է համալրելու գործաբանական լեզվաբանության այն ուսումնասիրությունների շարքը, որոնց շնորհիվ հնարավոր է դառնում համակարգել մարդկային հաղորդակցության տարաբնույթ դրսևորումներն իրենց բնորոշ կաղապարներով և համապատասխան լեզվական ու խոսքային առանձնահատկություններով:

Թողնելով աշխատանքի բովանդակությունը գլուխ առ գլուխ ներկայացնելու իրավունքը ատենախոսին՝ ես կփորձեմ լուսաբանել նրա կարևորությունն ու նշանակությունը:

Ժամանակակից լեզվաբանության առավել արդիական հիմնահարցերից է այսօր լեզվի հաղորդակցական և գործաբանական առանձնահատկությունների լուսաբանումը. մասնավորապես, եթե այն կատարվում է խոսողական ակտերի տեսության սահմաններում և ուսումնասիրության առարկա դարձնում լեզվանյութի վերձանումը համապատասխան մշակութային և սոցիալական միջավայրում: Այդ իսկ պատճառով խոսողական ակտերի ուսումնասիրությունը հատկապես կարևորվում է, երբ տեղափոխվում է մարդակենտրոն ու

ճանաչողական լեզվաբանության դաշտ և վերլուծության առարկա դարձնում խոսքային գործունեության ներ- և արտալեզվական դրսևորումների համակցությունը: Ահա թե ինչու, երբ անհատի խոսքը դիտարկվում է որպես նրա հանրության գործունեության դրսևորման ձևերից մեկը, ուսումնասիրության առարկա է դառնում նաև ամբողջական խոսույթը իր բոլոր առանձնահատկություններով հանդերձ, որոնք տեղավորվում են հետևյալ բանաձևային կաղապարում. արտալեզվական լայն համատեքստ (այսինքն՝ մշակութային և սոցիալական միջավայր), խոսող (այսինքն՝ խոսքաստեղծ անհատ), խոսք (այսինքն՝ ներազդեցության միջոց) և վերջապես ընկալող (այսինքն՝ հետադիմություն կամ հետադարձ կապ):

Այդ իսկ բանաձևն է ընկած պաշտպանության ներկայացված ատենախոսության հիմքում, որի նպատակն է որոշարկել **բողոքի** արտահայտման լեզվագործաբանական և մշակութային առանձնահատկությունները հայերեն և անգլերեն համացանցային խոսույթում և վեր հանել երկու մշակույթները կարգորոշող նմանություններն ու տարբերությունները: Հետազոտության նպատակով է պայմանավորված նրա արդիականությունը: Դժգոհությունն ու բողոքն այսօր մեր առօրյայի անքակտելի մասն են կազմում՝ դժգոհում ենք քաղաքականությունից, ղեկավարությունից, տնտեսությունից, միմյանցից և իհարկե կենցաղի ոլորտին վերաբերող բազմազան ծառայություններից: Մերօրյա աշխարհում **բողոք** արտահայտող հրապարակումների կտրուկ աճն ըստ էության նպաստում է հաղորդակցական նոր ռազմավարությունների և հասարակության գիտակցության վրա ներազդելու լծակների ձևավորմանը:

Ատենախոսության թե՛ տեսական, և թե՛ գործնական նյութի մանրազնին ու բարեխղճորեն կատարված վերլուծությունը հավաստում է հեղինակի գիտական ներուժի, հետազոտական հմտության և ինքնուրույնության մասին: Ատենախոսության կառուցվածքը, գլուխների և ենթագլուխների դասավորությունն ու հաջորդականությունը միանգամայն հիմնավորված են և ապահովում են ողջ հետազոտության ճշգրիտ ու տրամաբանական զարգացումը:

Ատենախոսության ներածական մասում հստակ ձևակերպված են հետազոտության նպատակն ու խնդիրները, մեթոդաբանությունն ու կիրառված վերլուծական մեթոդները:

Թվում է, թե ատենախոսության մեջ ասվում է այն ամենի մասին, ինչին մեզանից յուրաքանչյուրը ականատես է լինում առօրյա կյանքում: Երբ ընթերցում ես ատենախոսությունը, աչքիդ առջև են կանգնում բոլոր այն իրավիճակները, որոնք նկարագրում ու վերլուծում է հեղինակը: Սակայն մեզանից որևէ մեկի մտքով չանցավ խորությամբ ուսումնասիրել այդ ամենը, դիտարկումները գրանցել և վերլուծել, ու հրապարակային պաշտպանության ներկայացնել դրանցից քաղած թե՛ տեսական, և թե՛ գործնական նշանակություն ու գիտական արժեք ունեցող եզրահանգումները:

Ատենախոսությունը հատկապես կարևորվում է այն փաստով, որ նրանում լուսաբանված հիմնադրույթները ստացել են հեղինակի կողմից հետաքրքիր լուծում, ուր գործնականն ու տեսականը միաձուլված են. գործնականը կոչված է վերծանել առաջադրված տեսական դրույթները, միևնույն ժամանակ հասցնելով համապատասխան եզրահանգումները տեսական արժեքի:

Ընդհանուր առմամբ գնահատելով աշխատանքը՝ կցանկանայի նշել, որ Աննա Հրանտի Ավետիսյանի «Բողոքի արտահայտման լեզվագործաբանական առանձնահատկությունները հայերեն և անգլերեն համացանցային խոսույթում» թեմայով ատենախոսությունը հասուն և գիտական արժեք ունեցող հետազոտություն է: Այն գրված է գիտական պատշաճ մակարդակով և լուծում է ատենախոսի կողմից ձևակերպած խնդիրները՝ առաջադրված նպատակին հասնելու համար: Հատկապես տպավորիչ են ատենախոսությունում զետեղված գծապատկերներն ու աղյուսակները, որոնք ամփոփում են հեղինակի եզրահանգումները և/կամ հստակ ու ամփոփ կերպով ներկայացնում առանցքային դրույթներ, ռազմավարություններ, դասակարգումներ:

Եվ այսպես, գործ ունենք մի ծավալուն և հետաքրքիր, թե՛ ուսումնասիրված նյութի և թե՛ լուսաբանված լեզվաբանական երևույթների առումով, աշխատանքի հետ:

Բարձր գնահատելով կատարված աշխատանքը՝ այնուամենայնիվ կցանկանայի ատենախոսի ուշադրությունը հրավիրել մի շարք դիտարկումների՝ աշխատանքն առավել կատարյալ տեսնելու ցանկությամբ:

- Այսպես ատենախոսության երկրորդ գլխի 2.1 և 2.1.1 ենթագլուխների բաժանումը չեմ կարծում արդարացված: Հասկանում եմ, որ 2.1 ենթագլխում ատենախոսն առաջարկում է հայերեն և անգլերեն համացանցային խոսույթում **բողոքի** արտահայտման ռազմավարությունների իր սեփական դասակարգումը և ցանկանում է այն առավել ցայտուն դարձնել: Այնուամենայնիվ ենթագլուխը զբաղեցնում է ընդամենը կես էջ, առավել ևս, որ այդ դասակարգումը ընդհանրական է և չի անդրադառնում վերնագրում նշված հայերեն և անգլերեն համացանցային խոսույթների տարբերակիչ բնութագրիչներին: Այս հատվածը կարելի էր զետեղել հաջորդ ենթագլխի սկզբում:
- Անդրադառնամ ատենախոսության էջ 53-ի հետևյալ օրինակին. *Մի տեսակ ռոմանտիկա կա էս անլույս ամանորի մեջ: Շնորհակալություն կազմակերպիչներին: Լավագույն բարեմաղթանքներով...*, ուր ռուսերեն Ե-ը (МЯГКИЙ ЗАНАК) դիտարկվում է որպես հնչյուն: Մեջբերում եմ բառացի. «Օգտատերը, կիրառելով **ռոմանտիկա** բառային միավորը ռուսերենին բնորոշ Ե հնչյունի շեշտադրմամբ ... , մեղմացնում է տհաճ իրավիճակի լրջությունը»: Նախ և առաջ նշեմ, որ ռուսերեն Ե-ը հնչյուն չէ՝ տառ է, որն այլ բաղաձայնի կամ ձայնավորի միանալով փոխում է վերջինիս արտասանական որակը («փափկացնում» է բաղաձայնը և հայկական յ-ն ավելացնում ձայնավորի արտասանության մեջ): Համամիտ չեմ նաև ատենախոսի այն դիտարկմանը, որ **ռոմանտիկա** բառային միավորի շնորհիվ մեղմացվում է տհաճ իրավիճակի լրջությունը: Ըստ իս տվյալ համատեքստում ռուսերեն Ե-ը ոչ թե մեղմացնում է տհաճ իրավիճակի լրջությունը, այլ հակառակը՝ յուրովի գնահատում է այն, ձեռք բերելով հեգնանքի, նույնիսկ ծաղրանքի եղանակ:
- Ատենախոսության էջ 54-ում շարահյուսական միջոցների շարքում **Շնորհակալություն կազմակերպիչներին** նախադասությունը դիտարկվում է որպես զեղչված գլխավոր անդամով նախադասություն, իսկ *Լավագույն բարեմաղթանքներով...* անավարտ նախադասությունը որպես անվանական անդամ նախադասություն: Հարց է ծագում. ինչպե՞ս կհնչեր **Շնորհակալություն կազմակերպիչներին** նախադասությունը, եթե գլխավոր անդամը առկայացված լիներ և *Լավագույն բարեմաղթանքներով...*

անավարտ նախադասությունը, եթե այսպես կոչված «դեմքը» առկայացվեր: Ասածս այն է, որ այս նախադասությունները բնորոշ են առաջինը հրապարակախոսական ոճին, իսկ երկրորդը՝ նամակագրական ոճին: Ինձ թվում է օրինակի վերլուծությունն այս դիտանկյունից հնարավորություն կընձեռներ ատենախոսին առավել ճշտությամբ որոշարկել ողջ ասույթի պեռլոկուտիվ ներազդեցությունը հասցեատիրոջ վրա և պատասխանել շատ պարզ մի հարցի. ի՞նչ նպատակով է օգտատերը նման կերպ դիմում իր ներտեքստային հասցեատիրոջը, և ի՞նչ ակնկալիքներ ունի և/կամ չունի տվյալ իրավիճակում:

- Ատենախոսության էջ 56-ում **Վեռլիա Ջրին** վերաբերող օրինակում ատենախոսը դիտարկում է բողոքն արտահայտող բոլոր միջոցները (բառային, շարահյուսական, պատկերավոր), սակայն որևէ կերպ չի անդրադառնում բազմաթիվ հարցական նշաններին (**նորություն չկա՞** - երկու հարցական նշան, **շատ ենք սպասելու՞** - երեք հարցական նշան), որոնք կարևոր դեր են կատարում բողոքի խոսքայնացման գործում, այն առավել ուժգնացնելով և տպավորիչ դարձնելով:
- Նույնը վերաբերում է ատենախոսության էջ 60-ում **Domino's** ռեստորանների ցանցի դիտարկումներին: Ատենախոսի ուշադրությունից վրիպել են հարցական նշանները (**This is called a large pizza ???** - երեք հարցական նշան) և բացականչական նշանը (**I could never finish a full pizza before, now I can eat 2 of them!**), որի կարիքն ըստ անգլերենի կետադրության կանոնների տվյալ նախադասությունում չկա, սակայն օգտատերն այն օգտագործել է, բողոքն առավել ազդեցիկ դարձնելու նպատակով:
- Ատենախոսության էջ 80-ում «**կացինային** սպասարկում» բառակապակցությունում հեղինակը դիտարկում է «**կացինային**» միավորը որպես գոեհկաբանություն, և եթե չլիներ տողատակի պարզաբանումը, ատենախոսի հասցեատերը չէր հասկանա, ինչու է գրական «**կացին**» բառը գոեհկաբանություն, առավել ևս, եթե նա չգիտի ռուսերեն «топорный» ածականի հարանշանակային իմաստը: Ըստ այդմ, կարծում եմ, որ տողատակը պետք է տեղադրվեր բուն տեքստում և դառնար ավելի ընդլայնված



սահմանում ի ապացույց նրան, որ «կացինային» միավորը իսկապես գոեհկաբանություն է դառնում տվյալ համատեքստում:

- Ատենախոսության էջ 82-ում «The slowest place on the face of the planet!» օրինակը վերլուծելիս ատենախոսն օգտագործել է «հասցեատեր» եզրույթը հավանաբար նկատի ունենալով «օգտատերը»:
- Ատենախոսության էջ 120-ում դիտարկված օրինակների վերլուծության արդյունքում ատենախոսը եզրակացնում է (մեջբերում եմ բառացի) «Նմանատիպ մեկնաբանությունները չեն խթանում ստեղծված իրավիճակի մեղմացումը և բացասաբար են ընկալվում օգտատերերի կողմից»: Կարծում եմ, որ այդ մեկնաբանությունները ոչ միայն բացասաբար են ընկալվում օգտատերերի կողմից, այլև զգացմունքային մակարդակում «թշնամանք» են առաջացնում: Բացի այդ ըստ իս պերլոկուտիվ ազդեցության վերծանումն առավել ազդեցիկ և լիարժեք կլիներ, եթե օրինակները դիտարկվեին օգտատիրոջ խոսույթի հետ մեկտեղ:
- Նման դիտարկումներս ավարտեմ հետևյալ հարցով. ինչու<sup>6</sup> է ատենախոսը էջ 136-ում «Menu.am, դժոխքում ձեզ ջուր բերեն նույն արագությամբ...» օրինակում անեծք-ուղերձը համարում հրամայական կառույց:
- Կցանկանայի նաև նշել, որ ատենախոսը բավականին հաճախ է օգտագործում «սաստկացնել» բայը որևէ երևույթի իմաստը առավել ցայտուն դարձնելու համար, սակայն այն միշտ չէ ծառայում իր նպատակին: Շատ դեպքերում այն կարելի է փոխարինել «ուժգնացնել» և/կամ «շեշտադրել» բայերով:
- Բոլոր այն դեպքերում, երբ ատենախոսը հատուկ ուշադրություն է դարձնում խոսակցական լեզվի կիրառությանը ֆեյսբուքյան էջերում, ուզում եմ նշել, որ դա ֆեյսբուքյան ոճի առանձնահատկություններից է համարվում, և նույնիսկ ոչ վիրտուալ կյանքում հատընտիր հայերենով խոսող անձինք «օգտատերեր» դառնալուն պես գրեթե միշտ անցնում են առօրյա խոսակցական լեզվին:
- Վերջապես դիտարկումներիս շարքը կցանկանայի ավարտել հետևյալ նկատառումով. ատենախոսությունը կատարված է բացառապես գործաբանական վերլուծության լույսի

ներքո, ինչը ողջունելի է և բարձր գնահատականի է արժանի: Բայց և այնպես  
ատենախոսության վերնագիրը պարտադրող է իր ձևակերպումով. «... հայերեն և  
անգլերեն համացանցային խոսույթում», այն ասես ենթադրում է երկու մշակույթների  
բնորոշ համացանցային հաղորդակցման առանձնահատկությունների որոշակի  
տիպականացում:

Ավարտելով խոսքս՝ կցանկանայի նշել, որ բոլոր դիտարկումներն ու հարցադրումները  
խմբագրական և խորհրդատվական բնույթ են կրում և բնավ չեն նսեմացնում ատենախոսության  
հատկապես գործնական արժեքն ու նշանակությունը: Հրապարակային պաշտպանության  
ներկայացված Աննա Հրանտի Ավետիսյանի «Բողոքի արտահայտման լեզվագործարանական  
առանձնահատկությունները հայերեն և անգլերեն համացանցային խոսույթում» թեմայով  
ատենախոսությունը լուրջ, հասուն և արժեքավոր գիտական աշխատանք է: Այն լիովին  
համապատասխանում է թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող  
պահանջներին, իսկ հոդվածներն ու սեղմագիրը արտացոլում են նրա հիմնական  
բովանդակությունը:

Ասվածը հիմք է տալիս ինձ միջնորդել գիտական աստիճան շնորհող 059 մասնագիտական  
խորհրդի առջև Աննա Հրանտի Ավետիսյանին շնորհելու հայցվող աստիճանը Ժ.02.02  
«Ընդհանուր և համեմատական լեզվաբանություն» մասնագիտության գծով:

**Գ.Ռ. Գասպարյան**  
**բ.գ.դ., պրոֆեսոր**

Հաստատում եմ բ.գ.դ., պրոֆեսոր  
Գ.Ռ. Գասպարյանի ստորագրությունը

**ԲՊՀ-ի գիտքարտուղար**

04.01.2024



**Հ. Փիլավջյան**